

Աս շատ խնդրեցի, որ ծածուկ բացատրէ ինձ զրա զազու-
նիքը, սակայն նա ինձ անհաւատ կոչեց և պնդեց, թէ սրբե-
րի զօրութեամբ է իւրիկը փութի միջից գուրս գալիս:

Աս առաջ փութան և երկուր փորձեցի, մինչև որ գտայ
գաղտնիքը, — երկու ծաւելիս՝ փութայի մի ծաւելը կտրեմ է ա-
նում, այնպէս որ իրիկի վրայ փաթաթելիս՝ իրիկը կտրեմ ծա-
րից գուրս է գալիս:

ԿՆՏԵՆՆԵՐԻՆԵՐ.

Բոյսեր.

Փոքօքուրդը հաւատում է թէ, եթէ շագկամը այնպէս կպնեն,
որ կպնէ մի ամբողջ կտոր լինի և գնեն բարձի աակ, միտ օրը սակի
կը գաւնայ:

Հացի համար խուր տաքացնելիս խաշովնքում են, որ սառանում
վերան չլուացուի:

Հացը գետին զցելը մեղք է, որովհետեւ թոնիր բնկել, մաք-
րուել, միքտուել է:

Մազած ալիւրի վերայ խաշ են քաշում, որ շարք չմտենայ:

Սոխի կպնենքը կրակի Վճ չեն ձգում որ սխլմտանքը չանի-
ծեն:

Կենդանիներ.

Եթէ կատուն հրանդի վերայ պտակի, կասեն հոգեաւ հրեշտա-
կը եկել է, հրանդը պիտի մեռնի: Բայց սրովհետեւ կատուն արգելում
է հոգեաւ հրեշտակին՝ հրանդի հոգին առնելու՝ մահը հեշտացնելու
համար կատուն հեռացնում են հրանդի մահից:

Սե ազուխին հրացանով խփելիս ականջները քուրզ են կտում,
որպէս զի ազուխի ձայնը չսեն, ապա թէ ոչ՝ կը մեռնին:

Սե կատու չեն պահում, սատանի եղբայր համարելով նրան:

Կովի գլխին խուր են ածում, որ կանայի կապած կաթը բացուի:

Կեռահայր չեղողը հաւ չի մորթում, որ թուրքի մորթ չլինի:

Կիրակի օրը հաւը թուխ չեն գնում, որ ձագերը կաղ չլինին:

Մորթած հաւի քուռնիթները (փորում եղած փաքթիկ հաւկիթ-
ները) անպատկները չեն ուտում, որ հարսանիքի գիշերը չլեզնին:

Եթէ չունը սունայ, անեցիներէց մին կը մեռնի, ուստի ունայիս
ծեծում են. որ այլ ես չունայ:

Եթէ մալը — եղջիրաւոր կենդանիներ — փռշտան՝ Թիփի կը լինի:

Եթէ եղնորք վերն նայեն և համաման՝ անձրն կը գայ:

Երեսդ անձրն գալիս, ասում են, եղնիկները կը ծնին:

Կենդանիները ծնելիս սանդերքը բերընքսփայր են գնում, որ կենդանու գոյը վայր թափի:

Նովի կաթը շնուտղելու համար, սկզբներում կթած կաթը զուրս չեն տալիս:

Թռչուններ.

Եթէ արագորք կամ հաւը անժամանակ կանչէ՝ կռտեն հաղառ հրեշտակն են տեսել, տանեցիկներից մինը պիտի մեռնի, սուտի և մորթում են զրանց:

Մարտի 9-ին արագիւր (յաղակը) վերադառնում է իւր համար պատրաստուած բունը: Եթէ նրա կտցում մի կտոր լինի, զա նշանակում է, որ պատերազմ, կտառած է լինելու, իսկ եթէ հացաբոյս՝ հացահատիկների և պտուղների առատութիւն:

Հաւը թռիս գնելիս թռիս գնողը ետփալի ծայրը իւր գլխին է ձգում, որ ձագը սփումփուլի լինի, իսկ եթէ հանդերձի փէշը վերցկէ, սխառու՝ կը լինի:

Եթէ հաւն անժամանակ կանչէ՝ հանում նրան տան երգիկից վայր են ցկում, եթէ գէպի թռնիրը գնայ, վառ նշան է, մորթում են, իսկ եթէ գէպի զուռը գնայ, լաւ է, կուտ են տալիս:

Դ և Ղ.

Մ Ե Ր Ե Ր Ե Յ ¹⁾ առողջանալու համար, մերկանում, փաթաթում են մէզարի (այծի մազերից հիւսուածք) մէջ և երեք անգամ զընում զըրում 4—7 անգամ ամուսնացող մարդու կամ կնոջ տան կտրում:

Եթէ երեխայի բերանը փրփրում է, կնքահայրը իւր թաշկինակը կամ կոշիկի ծայրը քսում է երեխայի բերանին, որ փրփուրը անցնի առողջանայ:

Նրաւա ժամանակ իրիցկնկայ բաթաթը (հացառ) զգաճում ջրհորն են ձգում, որ անձրն գայ և կամ իրիցկնկանը ձգում են ջուրը և ջուր ածում վերան:

Նոյն նպատակով կանայք ազամարզկանց գլխարկ ծածկում, հորորի են լծում և գետն՝ ընթացքին հակառակ վարում: Արանց քչում է իրիցկիներ:

Նրաւա ժամանակ երեխաները մի ձագի վերայ անց են կացնում

¹⁾ Մարմնի վերայ բռնիկներ են դաշանում և տառիկ քոր շաղիս և մի սոց քորիլիս, բշտում է միտ տեղը:

մի ցախանել, վերան ցկում են հափուղ և այդ շամախաթունը երկու հոգի զանէ դուռ ման ածելով՝ երգում են.

Գուրպատիկն էկեր է,
ձալէ շապիկը հագեր է,
Գեմէ գօտիկ կապեր է,
Կարմիր կովէն եղ կուգէ,
Սև հաւէն հաւիթի կուգէ.

Տնեցիք ամաններով չուր պատրաստելով հարցնում են.

«Էրթընէն կուգէր, թէ զանէն» եթէ պանէն առացին՝ երթիկից են չուր ածում պուրպատիկի և աղոց վերայ, խսկ եթէ «Էրթիկէն» զանից: Միևնոյն ժամանակ մի հաւիթի են ապրիս:

Անասուններն եթէ տանձու լինին, ծառադարձարի ճիւղով գարնում են, ածցնում է:

Կատաղած մարդու գլխին, եթէ 40 օրում չկարողացան բժշկել, մայրը մօխիւր է մազում, որ մեռնի:

Օձի շապիկը «փափախի»—գտակի—մէջ կարում են, որ գլխացու չպատահի:

Արեւ մայր մանկուց յետոյ մակարթի դուրս չեն ապրիս, որ մածունը մակըթափ:

Ցանքի ժամանակ կրակ դուրս չեն ապրիս՝ որ ցանքը լաւ լինի: Գորանուկից առողջանալու համար զօքանուկի համարով գարի կամ աղօթում ցանում են, կամ մեռելի պատանքի մէջ լցնում: Գարու չորանալու հետ, չորանում է և զօքանուկը:

«Մայիսացին»—մայիսին—սանդեքը դուրս չեն ապրիս՝ որ գառնեքը չքամոտին, նոյնպէս և խնացին, որ կարագը չիլ լինի:

Մայիսի եթին, գիշերը, խորոզխօսուն—հաւախօսին—լողանում են, որ չուրը տանի ցաւ ու չոքը:

Գարկուտ գալիս՝ աղ են վերս զցում, որ կարկուտը ածնէի փախուի:

Տան բարաբաթ.

Տան բարաբաթը պահելու համար՝

Թթխմորը դուրս չեն ապրիս:

Մի բան ծախելիս կամ փոխ ապրիս, նրա մի մասը կտրում պահում են:

Աղքատին ամբողջ հաց չեն ապրիս:

Երեկոյին տունը չեն աւելում, եւ եթէ սոփազանծ լինին աւելելու՝ աւելի ծայրը նրադի վրայ միջիլ փռում են:

Դիշերը հացի սփռոցը դուրսը թափ չեն ապրիս:

Աղբը գիշերը դուրս չեն ածում:

Նայն նպատակով անձրեկի ջրով լուանում են սաները թոնքի մէջ
կախուած:

Գրտիկի վրայ ջուր չեն ածում, որ սնախը չմարի—սունը չաւիրուի:
Մայիսին 10 աթար են չինում և պատերին կպցնում, որ աթարի
բարաքաթը աւելանայ:

Տան բարաքաթը չպահատելու համար՝ գիշերը կրակ դուռ չեն
տալիս:

Բարաքաթը աւելացնելու համար ինչ որ վերցնում են, ասում
են. «Ասաք ծու խաշը վրադ»:

Գառի երեսին ջուր չեն սրտում, որ չաղքատանան:

Տան մեծը մեռնելիս սաք լուանում, ջուրն ածում են սնուացքը,
որ սան բարաքաթը մնայ:

Հացը չթանգանալու համար կացինը ուսը դուրս չեն գնում:

Հ ի լ թ.

Հիւր կը գայ, երբ քիթ ու բերանը բոք գայ:

Երբ հաց եփելիս դունտը, կամ հաց ուտելիս պատառը ձեռից
վայր ընկնի:

Երբ կասուն լուացուի:

Երբ երեխան սաների միջով նայէ:

Երբ աչքը պաղի:

Երբ ուսը խաղայ:

Երբ գողնացի կապը քանդուի:

Երբ վաւած մոճի ծայրին բարակ շիւղեր մնան:

Երբ դրդալը ձեռքից վայր ընկնի՝ աղամարդ հիւր կը գայ:

Երբ բապունը սաքից ելնէ՝ կնիկմարդ հիւր կը գայ:

Երբ «թերթերունքը բեռ վերցնեն»—թերթեանունքը նպատակն
—հիւր կը գայ, իւր հետ բեռներ բերելով:

Երբ գունդը կեռայ՝ միջքաւոր հիւր կը գայ:

Երբ հերդիկից շունը ներս նայէ՝ շան երես (թուրք) հիւր կը գայ
և այն էլ այն կողմից՝ գէպի որ կողմը որ գառնայ շունը:

Հիւրին շուտ հեռացնելու համար նրա ստանաւներին վերայ աղ
են ցանում, կամ ծածուկ ալիւր են ցանում գլխին:

Հիւրը տեղանի վերայ անձեռացիկը չի ծալում, որ ուշ-ուշ չգայ:

Ճանապարհորդ.

Եթէ մինի սաք բոք գայ՝ նանապարհ կերթայ:

Ճանապարհորդը շուտով վերադառնալու համար՝ նամբու պաշա-
քից հաց են գողանում:

Ծակից չուք են սրտիս:

Բազանիս են գնում:

Յուն չեն տակում՝ մինչև նրա մի գետ անցնելու:

Դուչակելու համար թէ՛ նախապարհորդը ուշ թէ՛ շուտ կրգայ՝ երկխային քորել են ապիս իւր գլուխը. եթէ հեռու քորեց, ուշ կրգայ. իսկ եթէ մտաթիկ՝ շուտ:

Որպէս զի նախապարհորդը չվերադառնայ՝ յետեից պատուիկ են չարգում:

Մանապարհորդի բարձր կամ շտերը վերցնում են իրենց անդից, որ գժգոհ չհեռանայ:

Մազ.

Մազն երկարելու համար Մայիսի 7-ին եթէ անձրև գայ՝ հերարձակ կանգնում են անձրևի տակ:

Նայն նպատակով բազանիսում գողանում են երկար մազեր ունեցողի ջրից և իրենց գլխին՝ ածում:

Նւ կամ՝ երկար մազեր ունեցողի մազերն անդգալի կերպով աջ ձեռով բռնում և երեք անգամ տակից անցնում են:

Եթէ երկամներն աղջիկների մազերին ձեռք տան, մազերը կը թափին:

Մազերը երկարելու համար ուտում են նիւ պանիր կամ մսի նիւ:

Աղջիկներն ու կանայք այս մարդկանց գլխարկ չեն ծածկում, որպէս զի մազերը յթափին:

Կարած մազերը վայր չեն թափում, որ գլխները չցաւի:

Ատամ.

Դորա տեսնելիս պիտակները սեղմում են, որպէս զի գորտերը տատմները չհամրեն, ապա թէ՛ ոչ՝ շուտով կը թափին:

Նդունդ.

Կարած եղունգը թանրի չուրթը թաղում են և առում:

Շղունի, դու ֆոս կէցի,

Ագամ, դու վկայ կէցի:

Որպէս զի վերջին գառատառնի օրը գան իրենց գանին:

Բամբաստանց.

Եթէ ականջը կանչէ, այդ նշանակում է, որ իրեն բամբասում են:

Եթէ թանրի մէջ հացը ծակի՝ զար բերան կը բացուի — նոր բամբասող կերի:

Յաջողութիւնն եւ անյաջողութիւնը.

Եթէ աջ աչքը խաղայ, գործը կ'աջողի. իսկ եթէ ձախը խաղայ, չի յաջողի:

Եթէ շինիս (գոյգ) սաղա գայ, խէր (յաջող) է, եթէ վթար (կենտ) — ձախ, անյաջող:

Եթէ աջ բուռը քոր գայ, փող կը մտնէ, իսկ եթէ ձախ բուռը քոր գայ՝ կ'ստանայ:

Եթէ մէջքը կ'ենայ՝ գործը կը յաջողի:

Փռնչապիտ խաչակնքում են երեսը՝ որ գործը յաջող գնայ:

ԲԱՂԻԻ ԵՆ ԺԱՅԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԵՐԱՅ, ՑԵՄԻԼԷ ԵՆ ԹՈՂԱԹԻԹԻՆ.

Ախալալբաքի գիւղացի Հայ ժողովուրդը սաստիկ հաւատում է բաղդին եւ հափտաղբին:— Եթէ ակէտը զամէտթ է (բաղդ) գլխի ու գլխի. հափտի գիրն էտ է, թնչ գուգես էրէտ, ասում է նա խորին համոզմամբ եւ այս երկու գաղափարն անշարժութեան մէջ է պահում նրան: Ամէն մարդ ունի իւր զամէտթը, բաղդը, որովհետեւ նախ քան իրեն ստեղծուիլը, նրա զամէտթն է ստեղծւում:

Պատմում են, թէ Մովսէս մարգարէն խնդրել է Աստծուց մի բան էլ ինքն ստեղծել եւ ստեղծել է օթիկը անասունների գեղից: Իսկայն սրանք թափուել են Մովսէսի վերայ որ վախենալով բացականչել է, թէ սա ինչ բան է, ես ստեղծեցի, ինչ վերայ թափան:

— Թող առաջ զամէտթն ստեղծէիր եւ ապա իրենց, խրատում է Աստուած, որ իրենց զամթոփը ապրէին:

Միևնոյն ժամանակ լիովին հաւատում են թէ, եթէ զամէտթ է՝ ուր է ուր չէ՝ կը գայ կը գանի իրեն, եթէ մինչև անգամ ինքը խոյս էլ ատյ նրանից, իսկ եթէ զամէտթ չէ՝ հազար էլ լետեն ընկնի, ոչինչ չի կարող շահել:

Ժողովրդեան կարծիքով զամէտթը կամ զովլէտթը մի երեսասարգ է, զըռ ձիւտը:

Մի անգամ սա գնում նեծում է Գոմ գիւղի Մկրտիչ Սարգսեանի գուռը: Սա հարցնում է թէ ո՞վ է:

— Գու զամէտթդ եմ, պատասխանում է զամէտթը: